ԱՐԱՐԱՏԲԱՆԿ
Հասցե՝ 0010, ՀՀ, ք. Երևան, Պուշկինի 19 Հեռ.՝ (+37410) 54-78-95 Ֆաքս՝ (+37410) 54-78-94 էլ.փոստ՝ araratbank@araratbank.am

ք. Ստեփանակերտ

Կոդ: ՈՐԽ0102 – N 11/06 Լ
Դաս: ՀՊ
«09 » սեպտեմբերի 2015թ.

ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ ԽՈՐՀՈՒՐԴ
Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ ԲԱԺՆԵՏԵՐԵՐԻ ԱՐՏԱՀԵՐԹ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎ ՀՐԱՎԻՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի Հոդված 23-ի 1-ին մասը, «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի Հոդված 84-ի 1-ին մասի բ)-ից դ) կետերը, «Բանկերի և բանկային գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի Հոդված 21^{6}-ի 1-ին մասի բ) կետը, ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ կանոնադրության 12.1. կետի բ) ենթակետը՝ ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ խորհուրդը

Ո Ր Ո Շ Ե Ց.

1. Հրավիրել ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ բաժնետերերի արտահերթ ընդհանուր ժողով՝ (այսուհետ՝ Ժողով) 2015 թվականի հոկտեմբերի 20-ին՝ որոշումների ընդունման հեռակա քվեարկության (հարցման) եղանակով:
2. Ժողովին մասնակցելու իրավունք ունեցող բաժնետերերի ցուցակը կազմելու օր սահմանել 2015 թվականի սեպտեմբերի 15-ը:
3. Որպես ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ 2015 թվականի ֆինանսական գործունեության արտաքին աուդիտն իրականացնող անձ Ժողովի հաստատմանը ներկայացնել «ԳՐԱՆԹ ԹՈՐՆԹՈՆ» ՓԲԸ աուդիտորական կազմակերպությանը:
4. Հաստատել Ժողովի օրակարգը՝ համաձայն Հավելված 1-ի:
5. Ժողով հրավիրելու մասին բաժնետերերին ծանուցել պատվիրված նամակներ ուղարկելու միջոցով:
6. Հաստատել ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ բաժնետերերին տրամադրվող տեղեկությունների և նյութերի ցանկը՝ համաձայն Հավելված 2-ի:
7. ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ բաժնետերերին տեղեկացնել, որ սույն որոշման 6-րդ կետով հաստատված ցանկում ընդգրկված նյութերին կարող են ծանոթանալ ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ վարչական շենքում (ք.Երևան, Պուշկինի 19), ինչպես նաև համացանցի Բանկի տնային էջում (www.araratbank.am):
8. Հաստատել օրակարգի հարցերի վերաբերյալ քվեաթերթիկների ձևը՝ համաձայն Հավելված 3-ի:
9. Ժողովի օրակարգի հարցերի վերաբերյալ լրացված քվեաթերթիկների ընդունումն ավարտել 2015 թվականի հոկտեմբերի 20-ին:
10. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Խորհրդի նախագահ՝ Բարսեղ Բեգլարյան

Իսկականի հետ ճիշտ է՝
Աշխատակազմի ղեկավար՝ Մ.Ուզունյան

Հավելված 1
ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ Խորհրդի
2015 թվականի սեպտեմբերի 09 -ի N 11/06Լ որոշման

Օ Ր Ա Կ Ա Ր Գ

2015 թվականի հոկտեմբերի 20-ին կայանալիք ԱՐԱՐԱՏԲԱՆԿ բաց բաժնետիրական ընկերության բաժնետերերի արտահերթ ընդհանուր ժողովի

1.Որպես ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ 2015 թվականի ֆինանսական գործունեության արտաքին աուդիտն իրականացնող անձ «ԳՐԱՆԹ ԹՈՐՆԹՈՆ» ՓԲԸ աուդիտորական կազմակերպությանը հաստատելու մասին:

ԾԱՆՈՒՑՈՒՄ

ԱՐԱՐԱՏԲԱՆԿ բաց բաժնետիրական ընկերության բաժնետերերի արտահերթ ընդհանուր ժողովի մասին

Հարգելի բաժնետեր

ԱՐԱՐԱՏԲԱՆԿ բաց բաժնետիրական ընկերությունը (գտնվելու վայրը՝ ք.Երևան, Պուշկինի 19) 2015 թվականի հոկտեմբերի 20-ին հրավիրում է բաժնետերերի արտահերթ ընդհանուր ժողով՝ որոշումների ընդունման հեռակա քվեարկության (հարցման) եղանակով:

Ժողովին մասնակցելու իրավունք ունեցող բաժնետերերի ցուցակը կազմվել է 2015 թվականի սեպտեմբերի 15-ի դրությամբ:

ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ բաժնետերերի արտահերթ ընդհանուր ժողովի օրակարգը կցվում է սույն ծանուցմանը:

Ժողովում քննարկվող հարցերին վերաբերող նյութերին Դուք կարող եք ծանոթանալ ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ վարչական շենքում (ք.Երևան, Պուշկինի 19), ինչպես նաև համացանցի Բանկի տնային էջում (www.araratbank.am)՝ սկսած 2015 թվականի սեպտեմբերի 15-ից մինչև 2015 թվականի հոկտեմբերի 20-ը ներառյալ:

Միաժամանակ սույն ծանուցմանը կից Ձեզ ենք ներկայացնում Ժողովի օրակարգի հարցերի վերաբերյալ քվեաթերթիկը:

Հարգանքով՝

ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ վարչության նախագահ Աշոտ Օսիպյան

Իսկականի հետ ճիշտ է՝
Աշխատակազմի ղեկավար Մ.Ուզունյան

Հավելված 2
ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ Խորհրդի
2015 թվականի սեպտեմբերի 09-ի N 11/06Լ որոշման

Ց Ա Ն Կ

ԱՐԱՐԱՏԲԱՆԿ բաց բաժնետիրական ընկերության բաժնետերերին տրամադրվող տեղեկությունների և նյութերի

1. ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ 2015 թվականի ֆինանսական գործունեության արտաքին աուդիտն իրականացնելու համար ներկայացված ընկերության վերաբերյալ տեղեկություններ:
2. Ժողովի օրակարգի հարցերի վերաբերյալ քվեաթերթիկը: